օտար երկրներում բախտ որոնել: Եւ քանի՜ հազար թշոառ ընտանիքներ այժմ մնացել են առանց տղամարդների. միայն Կոստանդնուպոլսում այժմ 40 հազար հայ պանդուխտներ կան, եւ նրանց մեծ մասը վանեցիներ են: Ի՞նչ անէ խեղճ գիւղացին, որ չգաղթէ: Թողեալ այն, որ նրան կողոպտում է թուրքը, քուրդը եւ տէրութեան պաշտօնեան, — նոյնիսկ իր արիւնակիցը, իր կրօնակից հայը նրա կեանքի զօրութիւնը ծծում է, նրան խեղճութեան եւ թշոառութեան մէջ է գցում: Տաճկաստանի բոլոր քաղաքները լցուած են հայ մշակներով կամ հայ համալներով. — բայց դրանք մեր երկրի գլխաւոր ուժերն են, որ մաշւում են եւ ոչնչանում են պանդխտութեան մէջ:

— Դուք տեսաք, — շարունակեց նա, — որ հայ դրամատէրերը, հայ վաճառականը՝ մեր հասարակութեան բոլորովին աւերուած եւ վնասակար մասն է. նրանցից մենք ոչինչ բարիք չենք սպասում: Նրանք պաշտում են իրանց քսակը եւ աւելի ոչինչ: Վաճառականը ազգ եւ հայրենիք չունի, նրա հայրենիքն այնտեղ է, որտեղ են նրա շահերը: Եւ այս տեսակ վաճառականութիւնը (եթէ կարելի է վաճառականութիւն կոչել) աւելի վտանգաւոր է դառնում, երբ նա ներքին կապ ունի կառավարութեան պաշտօնակալների եւ նրանց անիրաւ գործունէութեան հետ: Դուք շատ անգամ եւ շատ տեղ տեսած էք այս բանը. օրինակ, գիւղացին պատրաստի արծաթ չունի եւ հարկի փոխարէն տալիս է իր արդիւնաբերած նիւթի մի մասը. հարկահանը չէ ընդունում, եւ ոչ ժամանակ է տալիս նրան, որ կանոնաւոր կերպով վաճառէ եւ հարկը լրացնէ: Դուք տեսնում էք, որ իսկոյն յայտնւում է հայ վաճառականը, եւ օգուտ քաղելով գիւղացու նեղ դրութիւնից, խոստանում է հարկահանի փողը տալ, եւ խիստ չնչին գնով առնում է գիւղացու դառն աշխատութեան պտուղը: Հիմա տեսնո՞ւմ էք, դրանք բոլորն էլ քեռի պետրոսներ են, միայն զանազան կերպարանքներով... — Քեռի Պետրոսներին միշտ ձեռնտու է միանալ քուրդ իշխանների հետ եւ դաւադրութիւն մեքենայել մեր դէմ...

Ասլանի ասածները ես բոլորը հասկանում էի, որովհետեւ իմ փորձած եւ տեսած բաներ էին: Կարծես թէ, ես բոլորը առաջուց գիտէի, թէ ոչ մի անգամ իմ մտքով անցած չէին նրանք, եւ ոչ մի անգամ իմ ուշադրութիւնը գրաւած չէին: Կեանքի խօսքը միշտ հասկանալի է լինում մարդուն, որքան եւ նա անզգայ լինէր, որովհետեւ այն խօսքը ուղղակի վերաբերում է նրա գոյութեան պահանջներին:

— Այս բոլորը հասկանում եմ, — ասեցի ես, — թէ ինչո՞ւ քեռի պետրոսներն այսպէս են վարւում, բայց չեմ հասկանում մի բան, թէ մեր տէր Թոդիկներն ի՞նչ շահ ունեն միանալու դրանց հետ: